

ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ
ՎՐԱՑ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Պ. Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Սայաթ-Նովան ինքնատիպ է ոչ միայն իր բանաստեղծական արվեստով, այլ նաև՝ բաղմալեզվյան խաղառացությունը: Պատմությունը հայտնի են երկու-երեք լեզուներով գրված արձանագրություններ, կա նույնիսկ շորսլեզվյան մի արձանագրություն, բայց դժվար է վկայակոչել մի այլ բանաստեղծի գրական ժառանգություն՝ երեք-չորս լեզվով գրված: Մեր օրերում, գուցե միջնադարում էլ, երեք-չորս լեզու իմանալը առանձնապես վարմանակի բան է, նույնիսկ ավելին իմացողներ կան, բայց դժվար պատկերացնելին իմացած: Լեզուներով ստեղծագործելն է, ըստ որում, յուրաքանչյուր լեզվով շարադրելու նրան հատուկ մտածելակերպ ու հոգեկան կերտվածք վկայելով:

Վրաց բանաստեղծ Տ. Տարիձեն Սայաթ-Նովայի գրական ժառանգությամբ պարզվելու իր կոչն այսպես էր ամփոփում. «Մեր ժամանակի բանաստեղծներս ոչ միայն այս երեք լեզվով գրել, այլև մեկ-մյուսի ընթերցումն ու հասկանալն էլ չենք հաջողում: Սայաթ-Նովան հենց դրա համար էլ նախընտրելի է ու գեղարարելի, որպեսզի մեր սերունդը ճանաչի նրա մեծագույն ժառանգությունը»¹:

Արդարացի է վրաց բանաստեղծի եզրակացությունը: Բայց այս դեպքում հարցը միայն մի քանի լեզվով ստեղծագործելուն չի վերաբերում: Սայաթ-Նովային ժամանակակից ոչ սակավաթիվ աշուղներ են հայտնի, որոնք մեկից ավելի լեզուներով են «խաղ կապել»: Հայ, վրաց և ադրբեջանական գրականության պատմությունը (առանձին-առանձին) նրանցից ոչ մեկին առանձնահատուկ տեղ չի հատկացրել, մինչդեռ Սայաթ-Նովան երեք գրականություն է օղակում, իր ծառայությունն ունի այդ ժողովուրդների ստեղծած մշակութային պատմության մեջ: Ուրեմն արտասովորը տարբեր մշակույթներ ունեցող ժողովուրդների մտավոր կյանքում միաժամանակյա ճեղինակությունն է: Ակադ. Կ. Կեկելիձեի բնորոշմամբ՝ «Սայաթ-Նովան այնքան արտասովոր անձնավորություն էր, այնքան մեծ էր նրա նշանակությունը ու ազդեցությունը վրաց գրական ու մտավոր շրջաններում»², որ նա վրաց գրականության պատմության մեջ իր ուրույն տեղն ու ծառայությունն ունի:

Յուրաքանչյուր ազգային մշակույթ իր ավանդություններն ու վիճակն ունի: Ուստի Սայաթ-Նովայի գրական ժառանգության նշանակությունը՝ հայ և վրաց իրականության մեջ, տարբեր չափանիշով պետք է գնահատել: Երբ խոսվում է վրաց գրականության պատմության մեջ տեղ ունենալու մասին, ապա նախապես հասկանալի է Սայաթ-Նովայի վրացերեն խաղերի գրական-գեղար-

¹ «Լիտերատյուր. զաբեդի», 1934, № 28, էջ 3—4:

² «Եվրոպական լիտերատյուրիս ուստորա», 1958, Ժ. II—4, էջ 878:

վլեստական կարեւորությունը: Սայաթ-Նովան իր ստեղծագործության յուրաքանչյուր երրորդ մասով մի առանձին ժողովրդի մտավոր քերթության պատմության օղակ է կազմում:

XVII—XVIII դարերը վրաց մշակույթի պատմությունը, վրաց դասական դրականության (XI—XIII դդ.) ավանդույթների վերածննդից բացի, հայտնի է նրանով, որ երկրի սոցիալ-տնտեսական, քաղաքական վարիտների պայմաններում առաջացան դրական նոր ժանրեր ու թեմատիկա, առավել չափով արտացոլվեց բուն վրաց իրականությունը՝ դրականության մեջ: Ակադ. Կեկելիձեն հետևյալ բնորոշ կողմերով է ընդգծում այս դարերի մշակույթը. աղիւսին մոտիվների ու ինքնություն ստեղծագործության ուժեղացում, թեմատիկայի լայնացում, դրական նոր ուղղությունների առկայություն («ռեալիզմ», կլասիցիզմ, ռոմանտիզմ), նոր ոճ ու ժանրեր (պատմական էպոս, առակախոսություն, սատիրա, ուղեգրություն, մեմուար, մրցախոսություն և այլն), չափածոյի գերազանցություն արձակի նկատմամբ, տաղաչափական նորամուծություն, ոճի ժողովրդականացում, պեսիմիզմ, ֆիդելիզմ, դիդակտիզմ և հերոտիզմ³:

XVIII դ. Թիֆլիսը դրական ինքնօրինակ մրցատեղի էր: Հուտ դրական ստեղծագործությունների կողքին տարածված էին աշուղական խաղերը, որոնք հիմնականում արտահայտում էին արհեստավորական խավերի տրամադրությունները: Վրաց ավանդական տասնվեցվանկյա և «չախրոխական» տաղաչափություններին զուգընթաց աշուղական պոեզիայի զարգացումը ժողովրդական նոր երանգ է ներթափանցում. արևելյան նշանավոր բանաստեղծական չափերը, նոր բովանդակության ստիպմամբ, դառնում են և վրացական: Գրականություն է մտնում բուն ժողովրդական բառ ու բանը, բանահյուսությանը հատուկ պարզ ու ամփոփական բանաստեղծությունը: Համառոտակի՝ այսպիսին էր վրաց մշակույթը Սայաթ-Նովայի ստեղծագործության տարիներին:

Այժմ հետաքրքիր է պարզել Սայաթ-Նովայի ծառայությունը վրաց դրականությանը՝ այնքան բազմաբնույթ այս պրոցեսում: XVIII դարում տառնյակ վրացի բանաստեղծներ են հայտնի, որոնցից դրականության պատմությունը առանձնացնում է 6-ին՝ Վախթանգ VI, Թեյմուրազ II, Մամուկա Բարաթաշվիլի, Դավիթ Դուրամիշվիլի, Բեսարիոն Գարաշվիլի (Բեսիկի) և Սայաթ-Նովա:

Պատմական աղբյուրներում արժանահավատ վկայություններ կան, որ աշուղական պոեզիան զարթոնք ապրեց XVII դարի կեսերից սկսած: Բայց, ըստ էության, դա ոչ թե դրական մշակման ու ղեկավարվածության կատարելության հասած պոեզիա էր, այլ՝ զուտ պայատական-ներբողադրական ծառայություն: Վրաց դրականությանը Սայաթ-Նովայի մատուցած երախտիքներից գեղը հենց աշուղական արվեստը արբունական այդ կոչումից դուրս բերելն էր: Ճիշտ է, նա ևս բազմիցս ներբողել է Հերակլ II թագավորին, բայց երբ ամենատուր ներառել է ներբողները զուտ արևելյան (այստեղից և՛ վրացական) ներբողագրության ժանրի հետ, որոշակի է դառնում, որ, ի վերջո, «ներբողական» միտումը զիջում է Սայաթ-Նովայի խոր անհատականությանը, թագավորին ձոնված երգը դառնում է կյանքի, կենսափիլիսոփայության ու ղեկավարվածության մտքի լավագույն արտահայտություն: Այլ կերպ՝ աշուղական խաղը դառնում է իր անհատականությամբ ընդհանրացնելու կարողություն ստացող ճշմարիտ բանաստեղծություն: Սայաթ-Նովայի ստեղծագործությունները, վրաց

3 Տե՛ս նույն տեղում, էջ 316—320:

իրականության մեջ գրական նախորդ շունենալով հանդերձ, իրենք ստեղծեցին բանաստեղծական մի նոր բնագավառ՝ տառնյակի հասնող հետևորդներով:

Ակադ. Կեկելիձեն աշուղական պոեզիայի (իհարկե ոչ սայաթնովյան) մասին խոսելիս նկատում է, որ այն Վրաստանում զարգացել է հատկապես XVII դարի կեսերից: Աշուղական արվեստը օտար չէր նախասայաթնովական Վրաստանին, և բնականաբար, Սայաթ-Նովան չէր այն հեղինակը, որը սկիզբ դրեց բանաստեղծության այս ժանրին: Բայց Սայաթ-Նովան մի այլ շնորհակալ ծառայություն մատուցեց վրաց գրականությանը. Վրաստանի երկարուժամ ենթարկվածությունը պարսկական, մասամբ և թուրքական գերիշխանությանը և վրաց մի քանի թագավորների բուն մահմեդական նիստուկացի ժամանակի ընթացքում ստեղծել էին զուտ արևելյան-աշուղական ներբողագրություն՝ պարսկալեզու և թուրքերեն: Իրենմանի ազնիվ, խրախճական սիրային աշուղական արվեստը դարձել էր պալատական մեծարման, հաճույքի, քծնանքի ու սուտ մեծության ներբողում: Այսպիսի «պոեզիան» իսկապես տր ոչինչ ընդհանուր չուներ վրաց գրականության հարյուրամյակների պատմություն ունեցող ավանդների հետ: Սայաթ-Նովան առաջինն էր, որ պարսկալեզու զուտ պալատական աշուղությունը դարձրեց ազգային-վրացական, աշուղական արվեստը դարձրեց նորից ժողովրդական՝ իր սկզբունքներով ու բովանդակությամբ: Մենք չենք ժխտում պարսկական, թուրքական եղանակների, ընդունված միջոցների ու մանավանդ բառացանկի առկայությունը այդ արվեստում՝ նրա ազգային-վրացական դառնալուց հետո: Դրանց առկայությունը նույնիսկ հնարավոր էլ չէ մերժել: Բայց Սայաթ-Նովայի մոտ «զուտ արևելյանը» էություն չէ, այլ հնարանքի մի մաս, միջավայրից բխող անհրաժեշտություն: Սայաթ-Նովան ամենից առաջ մեծ բանաստեղծ էր, իր արվեստին խորապես համատեղող և նվիրված բանաստեղծ, մի մարդ, որը իրավունք ուներ բացականչելու

სიტყვას ვიტყვი.— ცამ ჭუხილი დაიწყოს.

[სიսპ კასემ, ხეხინერ ნერვა]

Հովհան Արքայազնի «Կալմասուրայում» բավական մանրամասն տեղեկություններ կան այս «պարսկական հանգի» մասին: Պետրե Լարաձեի հետ երկախոսելիս Հովհանը պատասխանում է. «Չկար պարսից տրեք երգ՝ նրանց իսկ լեզվով ու կատարմամբ, որ վրացիները վաղուց ճանաչեին: Բայց այդ մասին գրավոր [աղբյուրները] չեն վկայում: Իսկ երբ մոտտոմ թագավորը ստացավ Քարթլին՝ հիմնովին պարսկական կարգ ու ծես սահմանեց... [Հերակլ] II-ի ժամանակ առավել ևս շատացան պարսից եղանակի գործիքներն ու երգերը... Մի քանի անձինք ձգտեցին և վրաց խոսքերին պարսից եղանակ հարմարեցրին: Նվագում էին շոնգուրի ու այլ գործիքի վրա և երգում: Այժմ էլ սա մեղ մոտ սովորական բան է: Իսկ այս հանդի (իմա՝ պարսկահանգ վրացերեն—Պ. Մ.) վրացերեն խոսքերով առաջին ներմուծողը հայ երաժիշտներն էին՝ Սայաթ-Նովան (ՎԱԲ. Սաաթլամա) և այլք, ապա՝ Բեսարիոն Գարաշվիլին՝ առաջնակարգ բանաստեղծ ու ստեղծագործող»⁴:

Հովհան Արքայազնը խոսում է պարսկահանգ աշուղական պոեզիայի մասին և ոչ թե աշուղական արվեստի մասին՝ առհասարակ: Նա ուղղակի մատնանշում է, որ Սայաթ-Նովան ու հայազգի այլ ստեղծագործողներ պարսկական հանգի երգերը առաջինը կատարեցին վրացերեն: Ի՞նչ ժամանակակից

⁴ კალმასობა, ტ. I, էջ 295—296:

տերմիններով արտահայտենք այս միտքը, ապա Սայաթ-Նովան «աղղայնացի-րել» է հարյուր տարի շարունակ պարսկերեն կատարվող խաղերը: Ավելի մեծ ծառայություն դժվար է պատկերացնել. պարսկերեն երգը փոխարինել է վրացերենով, թեկուզ նորից պարսկահանդ: Այդ նշանակում է, որ ստեղծագործական մտքի, բանաստեղծական արվեստի մի շատ դեմոկրատական բնագավառ առաջին անգամ (հարյուր տարվա ընդմիջումից հետո) հասկացալի էր դառնում վրաց ժողովրդին, վրացականացում էր: Ի դեպ, ինքը՝ Սայաթ-Նովան էս, ինչպես կարելի է նույն Հովհանի խոսքերից եզրակացնել, շատ լավ է պատկերացրել այդ ծառայությունը: Իրեն ուղղված «ասացեք, ո՞վ եք եղել դուք» հարցին նա պատասխանում է. «ես լավ շոնգուր [ավագել] դիտելի և միսթամանակ պարսկական հանդի վրացերեն խաղեր ստեղծեցի: Ղեկս [այս վրացարան խաղը] ընդունված չէր, և երբ թագավոր Հերակլը մեջլիսում էր ու ներս տարան մեզ՝ նվագողներին (իմա՝ սազանդարներին—Պ. Մ.), այն ժամանակ էս պարսկական հանդով վրացերեն երգեցի: Բատոնին շատ դուր եկավ, և ինձ խաչաթ նվիրեց: Հետո ուրիշ շատերն էլ ասացին և ընդօրինակեցին ինձ»:

Դուրս առանձնապես մեծ նշանակություն չունենար այս նորամուծությունը, եթե ի դեմս Սայաթ-Նովայի ունենայինք մի սովորական և միջին կարողություն տեր աշուղի: Բայց հարցի էությունն էլ հենց նրանում է, որ Սայաթ-Նովայի խաղերը բացառիկ գեղարվեստական գործեր են, հումանիստական քնարերգության լավագույն նմուշներ: XVIII դարի երկրորդ կեսի և XIX դարի առաջին տասնամյակների վրաց գրականության տեսարանը շատ լավ կպատկերացնի. թե ինչ է նշանակում սայաթնովյան պոեզիա, որի «մոխամբազները արձագանք են դնում XIX դարի առաջին կեսի պոեզիայում»⁵:

Սայաթ-Նովայի խաղերը մի ուրիշ, և շատ կարևոր, նշանակություն ևս ունեցան: Ինչպես տեսանք, աշուղական պոեզիան վրացական դարձավ: Բայց Սայաթ-Նովայի դոյությունը արտակարգ մեծացրեց վերջինիս նկատմամբ ներկայացվող պահանջը: Աշուղական արվեստը, ըստ էության, վերաճեց դասական քերթության:

Բազմաթեք է Սայաթ-Նովայի նշանակությունը վրաց գրականության մեջ: Փեշանգ Փաշվիրերտղաձեն և Արչիլը արդեն դրական նոր ուղղություն էին ստեղծել, այսպես կոչված «ճշմարտասացությունը», որ այժմ ունալիզմ ենք կոչում: Միջնադարյան տրագիկոն թեմաները արդեն փոխարինվել էին (և ղեկ փոխարինվում էին) վրաց ազգային կյանքից, պատմական կուրիտ իրականությունից քաղվող նյութերով: Բայց այդ պոեզիան ղեկս բավական հոռու էր ժողովրդական, կենդանի բանահյուսական ակունքներից սնվելուց: Սայաթ-Նովայի ծառայություններից մեկն էլ կենդանի բառերանի ժողովրդական պատկերավոր մտքի ներդրումն էր գրականության մեջ: Բեսիկի ու Ռ. Բուրամիշվիլու հետ միաժամանակ Սայաթ-Նովան դեմոկրատական բովանդակության, մատչելի ու անհատական քնարերգության առաջնեկներից մեկն էր ուշ միջնադարի վրաց մշակույթի պատմության մեջ:

Սայաթ-Նովայի վրացերեն դրած խաղերի մի մասն է Բիայն պահպանվել: Դժվար է կարծել, որ Վրաստանում տասնամյակներ ստեղծագործող բանաստեղծը ընդամենը 32—34 խաղ է վրացերեն հորինել: Շատ խաղեր, ինչպես

⁵ Նույն տեղում, էջ 227:

⁶ Յ. ՅՈՅՈԼՈԺԵ, նշվ. աշխ., էջ 319:

կարելի է ճշտել հայերեն պահպանված ժառանգության հետ համեմատելով, աղավաղված տարբերակներով են հասել մեզ, երբեմն նույնիսկ բանավոր աղբյուրից (այլ աշուղներից) գրաված:

Ակադ. Կեկելիձեն Սայաթ-Նովայի վրացերեն խաղերը երեք խմբի է բաժանում. ա) ինքնակենսագրական բնույթի (երկու խաղ), բ) խրատական (չորս խաղ), գ) սիրո (մնացածը): Բաժանումը կատարված է ըստ խաղերի բովանդակության: Բացառիկ արժեքավոր են առաջին խմբի երկու խաղերը, որոնք զրված են պալատից հեռանալուց հետո:

Անհրաժեշտ է նկատել, որ Սայաթ-Նովան ծանոթ է եղել վրաց գրականության հուշարձաններին, նույնիսկ աշխատել է ժառանգել որոշ ավանդույթներ: Այրբենաշար բանաստեղծության բնագավառում, մեր համոզմամբ, Սայաթ-Նովայի ուսուցիչը վրաց թագավոր-բանաստեղծ Թեյմուրազ I-ն էր:

Սայաթ-Նովան իր դարի ամենահեղինակավոր բանաստեղծներից էր. մանավանդ եթե նկատի առնենք այն ժամանակվա Թիֆլիսի սոցիալական խավերի ու նրանց դադափարախոսության փոխհարաբերությունը: Ժամանակի խոշորագույն բանաստեղծները չէին կարող չճանաչել հին Թիֆլիսի բոլոր անկյուններում, արքունիքում թե «ղարաշոխալիների» քեֆերին երգվող, առած ու ասացվածք դարձած խաղերի հեղինակին՝ Սայաթ-Նովային: Եվ հիրավի, XVIII դարի վրաց ամենատաղանդավոր բանաստեղծներից մեկը՝ Բեսիկին, բավական երկար ժամանակ կրում էր Սայաթ-Նովայի անխուսափելի ազդեցությունը: Բեսիկին (1750—1791) շատ բաներով է բախտակից Սայաթ-Նովային. բանասերներից շատերը նրա բանաստեղծություններում հանդիպող «թագուհի Աննան» նույնացնում էն Հերակլ II-ի քրոջ հետ, ոմանք՝ Աննա Օրբելիանիի և այլն, բոլոր դեպքերում՝ Բեսիկիի ներշնչանքը ևս «Աննա» է: Բեսիկին ևս վտարվեց Հերակլի պալատից (1777): Ակադ. Կեկելիձեի կարծիքով վտարողը ոչ թե Հերակլ II-ն էր, այլ՝ Անտոն I-ը: Այս դիպվածը գուցե կարելի է նկատի առնել Սայաթ-Նովայի ընդհարման պատճառները մեկնելիս, մանավանդ որ Անտոն I-ին երգիծող մի կալամբուր ունենք: Բեսիկին, բարեբախտաբար, Թիֆլիսից վտարվեց միայն, մինչդեռ Սայաթ-Նովան «սև սքեմ» հագավ: Աղբյուրների վկայությամբ՝ Բեսիկին արտակարգ նվազող է եղել և շատ հաջող ձայն է ունեցել: Այս տվյալները և ծանոթությունը Սայաթ-Նովայի գրական ժառանգությանը՝ Բեսիկինը դրդել են հետևել նրան, գրել աշուղական խաղեր, կիրառել Սայաթ-Նովայի խաղերին հատուկ տաղաչափություն և խաղատեսակներ (Բայաթի, Ղափիա, Մուստազադ, այսինքն իմա՝ Մուստաֆազադ, Թախմիս, Մուխամբազ և Թեջիս): Ասում ենք Սայաթ-Նովայի ազդեցությամբ որովհետև նրանից առաջ վրացալեզու այսպիսի ոտանավորներ չկային: Սայաթ-Նովայի նմանողությամբ Բեսիկին ևս «պարսից հանգի վրացերեն խաղեր» էր գրում և մեծարվում ժամանակակիցների կողմից: Բեսիկին հետևել է Սայաթ-Նովային, որովհետև բանաստեղծական արվեստի այս բնագավառը հարիր ու ներդաշնակ էր իր ժամանակի պահանջներին, կոչված էր գրական միջավայրով և իր գաղափարախոսությամբ ամենից ավելի դեմոկրատական էր: Բեսիկին իր բանաստեղծությունների մի նշանակալի մասով Սայաթ-Նովային հետևում է ոչ միայն շափի ու ժանրի առումով, այլ նաև՝ ներքին բովանդակության, ընդհանուր տրամադրության: Բեսիկիի մոտ երբեմն հանդիպում են այնպիսի արտահայտություններ ու դարձվածքներ, որոնք, եթե նույնը չեն Սայաթ-Նովայի գործածածների հետ, ապա խիստ մերձ են: Միակ բացատրու-

թյունը Սայաթ-Նովայի ազդեցությունը որոնելն է, թեպետ և, անշուշտ, ազդեցությունը տրե՛լ րանով չի նվաստացնում այս տաղանդավոր բանաստեղծի գրական ժառանգությունը՝:

XVIII դարի երկրորդ կեսի և XIX դարի առաջին տասնամյակների Թիֆլիսի գրական շրջաններում Սայաթ-Նովայի ամենից ավելի հռչակված հեղինակն էր: Տասնյակ աշուղ-բանաստեղծներ կարելի է թվարկել, որոնք կրել են Սայաթ-Նովայի ազդեցությունը: Նրանցից քչերը միայն կարողացան ինքնուրույնանալ: Վրաց արքունիքի վերջին «սագանդարը» Յարալի Շանշիաշվիլին էր, որը թագաժառանգների հետ միասին 1801 թ. Պետերբուրգ տեղափոխվեց: Վրացական ձեռագրերում պահպանվել են այս արքայի խաղերը: Ուշագրավ է «Սայաթ-Նովայի հանգով, Յարալու ասած» (საათლამას გუარზედ, თქმული იარაღისაგან) խաղը⁸, ուր անկասկած վկայված է Սայաթ-Նովայի որոշակի ազդեցությունը ինչպես չափի ու ժանրի առումով, այնպես էլ՝ թեմայի ու կատարման: XVIII—XIX դարադլիսի աշուղներ Շամշի-Մելքոյի, Քիչիկ-Նովայի, Մաչարեկայի⁹ խաղերը կարգաչիս վերհիշում են Սայաթ-Նովայի տաղերը, բայց ոչ Շամշի-Մելքոն, ոչ Քիչիկ-Նովան, ոչ էլ Մաչարեկան չհասան իրենց ուսուցչին: Նրանց գրական ժառանգությունը հետաքրքիր է իր երկնակապակցով, ինչպես Թիֆլիսի գրական առօրյայի պատկերներով:

XIX դարի վրացագետ Զաքարիա Ճիճինաձեն Սայաթ-Նովայի ազդեցությունը կրած աշուղներ է համարում Դարսեան Ղորյանովին, Մելքուա Զանգիշվիլուն, Նիկողոս Ղարիբաշվիլուն, Հովհան Օրոշվիլուն և այլոց¹⁰: Այս ցուցակը կարելի է կրկնապատկել, եթե լրիվ ուսումնասիրվեն XVIII—XIX դարի վրաց ձեռագիր ժողովածուները: Սայաթ-Նովայի հետերդեններ են եղել նաև աշուղներ Բուդաղ-օղյանը, Սեֆիշ-օղյանը, Լապաթ-օղյանը, Դասպար Խոսրոնովը, մասամբ՝ Բեշարա Զարի-օղին, Միրզաջանը, Ուստա Սաֆարը և ուրիշներ: Սայաթ-Նովան թերևս Անդրկովկասի միակ բանաստեղծն է, որ հետևողների այսպիսի բանակ է յունեցել, անկախ ազդվողի ազդային պատկանելությունից:

Բեսիկիից հետո Սայաթ-Նովայի ազդեցությունը կրած խոշորագույն բանաստեղծը Ալեքսանդր Ծավճավաձեն է (1786—1846): Նա ժառանգել է Սայաթ-Նովայի ու Բեսիկիի բանաստեղծության նվաճումները, զուգադրել այն ֆրանսիական ոտմանտիգի¹¹ ու «անհատապաշտությամբ» հետ, մի տեսակ նոր որակ ստեղծել: Բնորոշը, սակայն, բուն վրացական քնարերգությունն է, Սայաթ-Նովայի սահմանած նորությունները՝ երբևից ուղղակի վերցրած, իսկ երբևից էլ՝ Բեսիկիի միջնորդավորմամբ: Վրացական պոեզիան Ծավճավաձեի ստեղծագործությամբ վարդապետան նոր շրջան ապրեց:

7 Բեսիկիի ստեղծագործության վրա Սայաթ-Նովայի ազդեցության մասին դիտողություններ ունեն ակադ. Կ. Կեկելիձեն (նշվ. աշխ., էջ 683) և Ի. Գրիշաշվիլին (Սովետնոցա, 1918, էջ 47—48):

8 Տե՛ս Վրաց. ՍՍԻ ԳԱ ակադ. Կ. Կեկելիձեի անվան Ձեռագրերի ինստիտուտի ձեռ. Ի—2310:

9 Որոշ բանասերներ 1795 թ. Աղա Մահմեդ-խանի արշավանքի ժամանակ վրացական դորքերին ուղեկցող «սագանդարի» մասին խոսելիս Սայաթ-Նովային ու Մաչարեկային շփոթում են միմյանց: Ի մարտ գոտեպնդողը Մաչարեկան էր, որի մասին հավաստի սկզբնաղբյուր կա (տե՛ս Ջ. Լեյբնովից, մեղսանո Սատեմա, 1930):

¹⁰ «Երոզեթ», 1878, № 119, էջ 2:

Սայաթ-Նովայի ժառանգություններից սեկն էլ, ինչպես արդեն նշել ենք, անհատական քնարերգության զարգացումն է։ Ըստ էության, վրաց իրականության մեջ հինգդարյա ընդմիջումից հետո նորից բորբոքվում էր, այսպես ասած, «կնոջ պաշտամունքը»։ Ռուսթավելուց հետո Սայաթ-Նովային ու Բեսիկին ենք պարտական այս ազնիվ ու ասպետական պաշտամունքի համար։ Ալ. Ճավճավաձենն ժառանգեց Սայաթ-Նովայի ու Բեսիկիի վաստակը, շխուսափելով նոր ժամանակներով կյանքի կոչված երանգավորումից։

Սայաթ-Նովայի ստեղծագործությանն առնչվող հաջորդ նշանավոր բանաստեղծը Գրիգոր Օրբելիանին է (1800—1883)։ Ժամանակին նրան «Իրգի արքա» անվանեցին։ Իվ ահա «Երգի արքա»-ը. Օրբելիանին արտակարգ սիրով ու արժանավորությամբ է ժառանգում Սայաթ-Նովայի տրագիցիան, նրա Եմանողության մեջ խաղեր է գրում։ Նրա բանաստեղծություններից մեկը ուղղակի կոչվում է «Սայաթ-Նովայի եմանողությամբ»¹¹, ուր իբրև բնաբան բերված են մեծ երգչի նշանավոր խոսքերը.

«անձանձ ցոլցո, և իշխան զին զար,
 և ուն-նոյն ժողով. արտոն զար».
 [Այբբենը գիտեմ, խոսնով հաշիւ եմ
 Սալաթ-նովա՝ Հաբուսիւնը եւ եմ:]

Մեկ այլ բանաստեղծության բնաբանը դարձյալ վերցված է Սայաթ-Նուվազից.

„როდის მობრძანდები, ჩემო ბატონო.
ფეხქვეშ **ჯაჯიშალო** ფინანდაზათა.
[ხერ სე ყაიო, ეიო ხმ რასთონ'
მთხილ თასს ქოტს ქიანღაყი ყესა:]

Զենք ասում, թե լանաստեղծի ընտրած յուրաքանչյուր բնարան միայն ազդեցության արդյունք է։ Բայց այստեղ իսկապես ազդեցության հետ գործ ունենք, մանավանդ որ մի այլ առիթով նա ցիտում է Շամշի-Մելքոյի «Մուխամ-բադ, ինչ քաղցր ձայն էս» խոսքերը, իսկ մուխամբադը «քաղցր ձայնի» իրա-վունք ստացավ հենց Սալյաթ-Նովայի ստեղծագործությամբ։

Այսպիսով, XVIII—XIX դարի առաջին կեսի վրա, մի շարք նշանավոր բանաստեղծներ, բացի հայտնի ու անհայտ աշուղներից, կրել են Սայաթ-Նովայի խաղերի ազդեցությունը: Ինքնին հասկանալի է, որ միայն խոշոր բանաստեղծի երգերը, միայն միջավայրին ու իր ժամանակի դեմոկրատական գաղափարներին հատուկ երգերը կարող էին ալսպիսի նշանակություն ստանալ:

Զի կարելի ասել, թե XIX դարի առաջին կեսից հետո էլ շեղան Սայաթ-Նովայի ազդեցությունը կրող վրացի բանաստեղծներ. Անտ. Փուրցելաձեն, օրինակ, բավական երկար ժամանակ է Սայաթ-Նովային հետևել, և, որ ավելի հետաքրքիր է, իբրև բնաբան վկայակոչել Սայաթ-Նովայի դեռևս անհայտ խաղի մի քառատող.

ღამის არახინი ოთახში დამრჩა, პროშტის ლაზათი. ტუჩებში დამრჩა.¹²	ზიჯესიკაჲ ყაყა ოყა ხილმ მნაყ, ჰამყოყეჩი ჩამრ, ნილყესეჩიჲ მნაყ:
---	---

¹¹ Տե՛ս «Տառնոնո սաճանճառո», 1875, էջ 156—158, դրված է Հավլաբարի «Կապարմայում» քանտորկուսի Ժամանակ 1833 թ., հմտ. «Որսկարո», 1863, № 9, էջ 147—148:

¹² *სტა* „კრებულო“, ჯგ 61, რამათ. ი გრიშაშვილი, საბათნოვა, 1918, ჯგ 32:
 „*საბათნოვა* თიოგის არა ჩინი რათი ქერაყაზი, ქიამრ სურ *«ქაყა»* ქარგინათი, რათაგჩ აქს
«ქაყას» ჯ ზუანსაკილი:

Մի որոշ շրջանում Սայաթ-նովայի (այս դեպքում՝ հին թիֆլիսի բառ ու բանի) ազդեցության կնիք են կրել ի. Գրիշաշվիլու բանաստեղծությունները, մանավանդ ստեղծագործության առաջին շրջանում:

Եթե վերոշարադրյալը համառոտակի ամփոփենք, ապա հետևյալն է Սայաթ-նովայի գլխավոր ծառայությունը վրաց դրականությանը.

ա) Պարսկալեզու աշուղական բանաստեղծության վրացականացում.

բ) Աշուղական արվեստի բարձրացում դասական դրականության մակարդակի.

գ) Բանաստեղծության մեջ ժողովրդական բովանդակության, ժողովրդական-արհեստավորական գաղափարախոսության ներդրում (բուրամիշվիլու հետ միաժամանակ):

դ) XVIII դարի կենդանի-խոսակցական վրացերենի կիրառում՝ բանաստեղծության մեջ.

ե) Խոր անհատականությամբ հագեցված քնարերգության հետագա զարգացում.

զ) Սոցիալական երանգի շեշտում՝ վրաց գրականության մյուս երախտավորներին զուգընթաց:

РОЛЬ ТВОРЧЕСТВА САЯТ-НОВЫ В ГРУЗИНСКОЙ ЛИТЕРАТУРЕ

П. М. МУРАДЯН

(Р е з ю м е)

Грузинские стихотворения великого армянского ашуга Саят-Новы занимают заслуженное место в истории древнегрузинской литературы. В них отражены характерные черты грузинской литературы XVII—XVIII вв.—демократизация содержания, жанровое разнообразие, реальность мирских чувств, простота и доступность языка и стиля, фольклорные элементы в литературной обработке. Впервые в истории грузинской литературы, в лице Саят-Новы, Давида Гурамишвили и Бесики, выступают представители поэзии, отражающей жизнь простого народа.

Основной заслугой Саят-Новы является «национализация» в Грузии ашугской поэзии, развивающейся до него на персидском и турецком языках. Вместо панегирического придворного ашугства Саят-Нова выдвинул ашугство народного содержания, не избегая, однако, традиционных форм восточного стихосложения.